ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ—Երկեր *(հրատ. պատրաստեցին Լ. Հ. Բաբայանը և Ռ. Ի. Մաթևոսյանը), Հ. Ե, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 615 էջ։*

Ակադեմիկոս Հ. Մանանդյանի երկերի Ե հատորում զետեղված են Ուրարտուի և Հայաստանի պատմական աշխարհագրության ու շափագիտական հարցերի լուսաբանմանը նվիրված աշխատությունները։ Դրանցում քննարկվում և լուսաբանվում են Հայաստանի և Ուրարտուի առանձին երկրների, գավառների, բնակավայրերի և կարևոր կայարանների տեղագրության, ինչպես նաև շափագիտական հարցերը։ Սույն աշխատությունների գիտական նշանակությունը դուրս է դալիս հայագիտության շրջանակներից և անցնում ընդհանուր պատմագիտության հիշյալ պրոբլեմների ուսումնասիրության ոլորտը։

Հատորը ունի անձնանունների և տեղանունների, ինչպես նաև ցեղերի ու ժողովուրդների անվանացանկեր։

Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Ապրելակերպ. Անձնավորություն. Գիտատեխնիկական հեղափոխություն *(մեթոդաբանական ասպեկտ), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 138 էջ։*

Մարդու պրոբլեմատիկան գնալով ավելի մեծ տեղ է գրավում գիտության, տեխնիկայի ու արտադրության ոլորտներում տեղի ունեցող որակական տեղաշարժերի վերլուծության բնագավառում։ Եվ դա հասկանալի է, քանի որ նոր մարդու ձևավորումը զարգացած սոցիալիզմի պրակտիկ խնդիրն է, որը օրգանապես կապված է սոցիալիստական ապրելակերպի հետագա զարգացման հետ։ Այս աշխատության մեջ հեղինակը դիտարկել է նոր մարդու ձևավորման պրոցեսում գիտատեխնիկական հեղափոխության և սոցիալիստական ապրելակերպի փոխգործողության հասարակական մեխանիզմի բացահայտման մեթոդաբանական հարցերը։ Գիրքը նախատեսված է սոցիալիստական ապրելակերպի կատարելագործման ու զարգացման պրոբլեմներով հետաքրքրվող մասնագետների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար։

Գրքի պատասխանատու խմբագիրն է փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ս. Ս. Թովմասյանը։

Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ—Գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում (1880—1890-ական թվականներ), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 182 էջ։

Աշխատության մեջ Արևելյան Հայաստանի ետռեֆորմյան սոցիալ-տնտեսական զարգացման ֆոնի վրա լուսաբանվում են XIX դ. վերջին քառորդի արևելահայ գյուղացիական շարժումների պատմությունը։ Հեղինակը, հենվելով արխիվային նորահայտ նյութերի վրա, տվել է XIX դ. վերջի արևելահայ գյուղացիական շարժումների պատկերը։ Գիրքն ունի ներածություն, չորս գլուխ, վերջաբան, ծանոթագրություններ և տեղանունների ցանկեր։ Առաջին գլխում որոշված է Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը XIX դ. վերջին քառորդում։ Հաջորդ գլուխներում հեղինակը ցույց է տվել, որ գյուղացիության պայքարը մղվում էր երեք հիմնական ուղղություններով՝ պայքարը հողի համար, գյուղացիական մասսաների պայքարը ցարիզմի հարկային քաղաքականության դեմ և գյուղացիական ելույթները տեղական իշխանությունների դեմ։ Գրքում հավասարապես լուսաբանվում են ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական գյուղացիության դասակարգային պայքարի հարցերը։

Գրքի պատասխանատու խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Գալոյանը։

Ն. Ե. ԱՎԱԳՅԱՆ—Ազգային եկամտի աճի գործոնները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 142 էջ։

Աշխատությունում ուսումնասիրվում են ազգային եկամտի արտադրության պրոբլեմները։ Գրքի նպատակն է հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման, նյու-

թական ծախսերի տնտեսման և արտադրողական ոլորտում զբաղվածության ավելացման ուսումնասիրման հիման վրա բացահայտել այն օրինաչափությունները, որոնք պայմանավորում են ազգային եկամտի աճի տեմպերը զարգացած սոցիալիզմի պայմաններում։ Գիրքը բաղկացած է երկու գլխից։ Առաջին գլխում խոսվում է ազգային եկամտի արտադրության պրոբլեմների մասին, իսկ երկրորդը նվիրված է ազգային եկամտի աճի ինտենսիվ և էքստենսիվ գործոններին։ Գիրքն ունի նաև ներածություն, եզրակացություն, հավելվածներ և օգտագործված գրականության ցանկ։ Աշխատությունը նախատեսված է քաղաքատնտեսության հարցերով զբաղվողների համար։

Գրքի պատասխանատու խմբագիրն է տնտեսագիտության դոկտոր Վ. Ս. Ներկարարյանը։

Վ. Ա. ՄԻՐԶՈՅԱՆ—Գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխատանքի ինտելեկտուալացումը, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 193 էջ։*

Մարդկային աշխատանքի ինտելեկտուալացումը վերջին տարիներին դարձել է արդի սոցիալական զարգացման առանձնահատկությունների փիլիսոփայական և սոցիոլոգիական վերլուծության կարևորագույն թեմաներից մեկը։ Ներկա աշխատության մեջ փորձ է արվում, առավելապես փիլիսոփայական և սոցիոլոգիական տեսակետից, պարզաբանել աշխատանքի ինտելեկտուալացման էությունը, այդ պրոցեսի սոցիալական և տեխնոլոգիական հիմքերը, հասարակական և անձնային նշանակությունը, աշխատանքի ինտելեկտուալացման միտումի կողմից ժամանակակից մարդկությանը առաջադրվող խնդիրները։

Գրքում քննարկվում են «մարդ—տեխնիկա» համակարգի պրոբլեմները՝ առավելապես աշխատանքի սուբյեկտի հոգևոր ստեղծագործական զարգացման հնարավորությունների տեսակետից։ Բացահայտվում են գիտատեխնիկական հեղափոխության ծավալման պայմաններում աշխատանքի ինտելեկտուալացման առանձնահատկությունները և հեռանկարները։ Պարզաբանվում է աշխատանքի ինտելեկտուալացման միտումի սկզբունքորեն տարբեր սոցիալական նշանակությունը կապիտալիզմի և սոցիալիզմի օրոք։ Գիրքը նախատեսված է փիլիսոփաների, սոցիոլոգների և ուսանողների համար։

Աշխատության պատասխանատու խմբագիրն է փիլիսոփայական գիտությունների թեկնածու Ի. Մ. Խաչատրյանը։

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ—Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914—1920), *«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1984, 256 էջ։*

Մենագրությունը նվիրված է XX դարի տասական թվականների երկրորդ կեսի դեռևս հանգամանորեն չուսումնասիրված հայ-ռուսական գրական կապերին։ Հենց այդ տարիներին էր, որ ռուս մշակութային գործիչների հետ շփման մթնոլորտում հասակ էր առնում հայ գրականության և արվեստի այն սերունդը, որը դարձավ ինտերնացիոնալիզմի գաղափարների դրոշակակիրը Անդրկովկասի ժողովուրդների, սովետական ժողովուրդների մեծ ու միասնական ընտանիքում։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից և օգտագործած գրականության ցանկից։ Մենագրությունում, շրջանառության մեջ դրվող նորահայտ փաստական հարուստ նյութերով, ներկայացվում է ռուս գրողներ Վ. Բրյուսովի, Ս. Գորոդեցկու, Վ. Կամենսկու, Ի. Սևերյանինի, Կ. Բալմոնտի, Ֆ. Սոլոգուբի, Ա. Կուպրինի, Բ. Լազարևսկու, Պ. Սիբիրցևի, Ռ. Իվնևի, Ի. Էրենբուրգի և ուրիշների գրական-հասարակական գործունեությունն Անդրկովկասում, փոխառնչությունները հայ մտավորականության, գրական-մշակութային կյանքի հետ։ Այդ առումով էլ գիրքը գալիս է լրացնելու և ամբողջացնելու հայ-ռուս ժողովուրդների բարեկամության և գրական աղերսների մի շատ ուշագրավ էջ։